ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐԻՑ

Անծանօթ երկրում, օտար մարդոց մէջ՝
Ցածում եմ հիւանդ սրտով վշտաբեկ.
—Մահագոյժ աշնան տերևներն անվերջ—
Ինձ՝ խեղճիս վրայ՝ ողբում են մէկ-մէկ։

Խաւար դիշերին—երբ քուն են մտած
Վառ երազներով բոլորն էլ հանգիստ—
Պատուհանիս տակ հողմը կատաղած՝
Հիւսում է չարկամ ողբերգը՝—ինձ վիշտ։

Ոռնում է ուժգին ու հիւանդ սրտիս
Քնքուշ լարերն են անդուսպ տատանւում,
Տխուր յուզմունքով և թախծոտ լալիս.
—Այրւում է հոգիս, անողորմ տնքում...

Եւ սարսափի հետ սենեակս է մտնում
Սգացող քամին...—Ա՜խ, կեանքս, կեանքս՝
Ոսկէ անուրջ էր—չքացաւ անպատում
Շրջիկ հողմի հետ, լալկան նրա պէս։

Եւ բիւր մարդոց մէջ տանջւում եմ մենակ.
Բայց... չեն մօտենում հիւանդ, պաղ մարմնիս.
—Միայն դու, քոյր իմ, գիշեր ժամանակ
Հիւանդ մարմինս գրկում ես՝ լալիս։

Նարգիզ